ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՆԴՐԱՆԻԿ
SPECIAL TOPIC: FIRSTBORN

Այս «անդրանիկ» (*prōtotokos*) բառը Աստվածաշնչում կիրառվում է մի քանի տարբեր իմաստներով:

1. Բառի ՀԿ-յան ծագումը վերաբերում է՝
   ա. անդրանիկ զավակը պատկանում է ՅԱՀՎԵԻՆ (BDB 114, KB 131, տես՝ Ելից 13:2,12; 22:29; 34:19; Թվոց 3:13)
   բ. ընտանիքում անդրանիկ
      զավակի նախապատվությանը (տես՝ 2 Օր.21:17; Սաղմ.89:27; Ղուկ.2:7; Հռոմ.8:29; Եբր. 11:28)
2. Բառի կիրառությունը Կող.1:15-ում խոսում է Հիսուսի վերաբերյալ որպես առաջին ստեղծագործության, որը հնարավոր է լինի ՀԿ-յան մի մեջբերում Առակ.8:22-31-ից կամ Աստծո գործակիցը՝ օգնականը, արարչագործության ժամանակ (տես՝ Հովի.1:3; 1 Կորնթ.8:6; Կող.1:15-16; Եբր.1:2)
3. Բառի կիրառությունը Կող.1:15,18; 1 Կորնթ.15:20,23; Հայտն.1:5-ում վերաբերում է մեռելներից անդրանիկը լինելուն
4. Բառի կիրառությունը ՀԿ-ում Մեսիայի անվան հետ կապված (տես՝ Սաղմ.89:27; Եբր.1:6; 12:23). սա մի անուն է, որը համախմբում է Հիսուսի առաջնահերթության և Նրա կենտրոնական դերի մի քանի ասպեկտները: